Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

6340

891.99
Ц-77

1845

2003

10

2011

Printed in Turkey

# ՍԱՍՏ

# ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1796

Printed in Turkey

891.99
Ա-77
կւր.

# ՍԱՍՏ ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆՑ

ՅՕՐԻՆԵԱՑ
ԳԱՍՊԱՐ ԱՒԱԳԵԱՆ
ԲԻՒՆԿԻԱՆՑԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ՉՈՒԽԱՃԵԱՆ
ՎԵՀԱՓԱՅԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
Տ. Տ. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՒԻՏՃԵԱՆ ԹԱԴԷՈՍԻ՝ ՔԻՒՐՔՃԻ ԽԱՆ
1863

299
39

# Ի ՆՈՒԷՐ

## ԸՆԾԱՀԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ՅԶԳԵՑԻՆ ԲԱԶՄԵՐԳՈՒԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ Է ԴԲԵՐԾ

# Առ վերծանողս

Ցանկալով ըստ խմովսանն սպաս հարկանել օգտի սիրելի Ազգի իմոյ, որ է անժըխտելի պարտ իւրաքանչիւր ազգայնոյ, զմատենիկս զայս մատուցանեմ ի նուէր ազգային մանկտւոյ։

Բովանդակութիւն մատենիկանս է յորդոր ի խորշել ի մոլութեանց, և գնալ յանըստերիւր պողոտայ առաքինութեանց՝ ոտանաւոր շարադրեալ, որպէս զի հաճոյացի որոց նուիրեմս. զորօրինակ քաղցրացուցանել ապապարեն բժիշկք զշրթունս ըմպանակի դառն դեղորէից։

Արդ յուսալով սովին օգուտ ինչ մատուցանել բարոյականութեան Ազգիս, և ապաստանեալ յանկասիր ներողամտութիւն Ազգայնոց ի պատահել ինչ թերութեանց,

Մնամ միշտ անձնանուէր Ազգիս
ԳԱՍՊԱՐ ԱԻԱԳԵԱՆ
Բինկեանցի։

# ՍԱՍՏ ՄՈՂՈԹԵԱՆՑ

Ի կեանս մարդոյ մահկանացուի
Երկու ներհակք կան ի կռուի .
Մոլութիւնք ժանտք և բարք բարի
Յար ընդ միմեանս ի պայքարի ,

Որպէս ըմբիշ ճարտար ու արի
Մին զմիւսըն ուժգին մըղէ՝
Տիրել ոգւոյ մահկանացուի ,
Պաշտօն առնուլ ի նմանէ :

Իսկ յաղթութեան առնուն պըսակ
Առաքինի ու երկնային բարք .
Եւ մոլութիւնք ամօթահար
Առ ոտս նոցին խաղան թաւալ :

Յամօթս լինին չարին հնարք,
Խայտառակին ամէն իւր հաղթք.
Եւ դըրօշակ համեստութեան
Ի շուք ի փառս առնու ծածան։

---

## ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Այս ախտ ընկէց յերկնից բարձանց
Ըզզուարթնոց գունդ լուսազգեաց.
Մինչ Աստուածեան փառաց ի բաղձ
Ուրաստ եղեն ըզչափ իւրեանց։

Հպարտ մարդկան ներհակ է Տէր.
Սիրէ ըզխոնարհս նա առաւել.
Որ ընդվըզէ գոռոզաբար,
Կործանի շուտ ամօթահար։

Որ է ախտիւս այսու զեղծեալ,
Անպատիւ է ի յաչս մարդկան.
Քանզի զորդին սիրէ ո՛ր հայր
Մինչ տեսանէ ի հպարտութեան։

Սկիզբն ու արմատ է այս մեղաց .
Վայ որ ախտիս գերի իցէ .
Չարագոյն է վախճան նորին ,
Եւ կայեան՝ խորք տարտարոսին :

Սոյն այս ախտին ո՜չ , հետեւանք
Կորուստ մեծ է եւ՝ հալածանք ,
Որ անկանի յայս որոգայթ ,
Ի դժոխս գլի նա գայթ ի գայթ :

Ներքաղինից մարդիկ ցանկան .
Բայց ոչ ինքն . այլոց բերան
Մինչ հիւսեսցէ , յայնժամ քո փառք
Նուաղուն եւ բազմանան :

Երկնից փայլուն աստեղք համայն ,
Արեգ , լուսինքն աննման ,
Որք ընդ ձեռամբ Բարձրելոյն կան ,
Զեն նորին գործք հրաշական :

Բայց և՛ այնպէս խոնարհեցաւ ,
Էջ նա յերկիր և մարմնացաւ .
Եւ հեզութեամբ միշտ քարոզէր ,
Ի մեր մեղաց ըզմեզ փրկել ։

Ահա՛ բարի խրատ մի քեզ ,
Որ ծառայեալդ Աստուծոյ .
Ընդէր երբէք ոչ լիցիս հեզ .
Ըզփըքացումնդ ի բաց դարձո՛ ։

---

## ՆԱԽԱՆՁ

Այր նախանձոտ և չարակամ
Ունի ի տանջս զանձն իւր համայն .
Առատ բարիք այլոց անձանց
Էրկեն ըզնա ի չար նախանձ ։

Նախանձամոլն հրկիզարար
Զինքըն կիզէ թըշուառաբար .
Նախանձ ըզնա իբրև զորդն ժանտ
Ուտէ , տանջէ միշտ անընդհատ ։

Չարագրգիռ նախանձըն այն
Ի ըստ ինքեան թոյն գոյանան .
Եւ ոչ այլոց , այլ իւր անձին
Բերէ վընաս ոչ , ահագին :

Նախանձաբեկ սուրըն լեզու
Ի դառնութեան մըխեալ է թոյն .
Եւ խըռովի տանջի , մինչդեռ
Զայլոց տեսցէ ըզբարութիւն :

Նըստի ի տան իւրոյ յանկիւն ,
Ի սիրտ , յոգի տըխրութեամբ լի .
Քանզի այլոց բարօրութիւն
Հալէ , մաշէ զնորայն ոգի :

Ի սիրտ նորա ոխ է բունեալ .
Ոչ կամի նա ըզբարձրանալ
Այլոց , և թէ բարձրանայցեն ,
Զանկումն նոցին կամք իւր խնդրեն :

Անքուն հըսկէ նա ի չարիս ,
Եւ հալածի ի մարդկանէ .
Եւ իբրև սարդ կապեալ կըծկի
Յառանձնութեան . այր ողբալի :

Այն որ զբարիս ի հաստումն ած ,
Ի պէտս մարդկան 'նեթ ընծեռեալ .
Ետ նաև միտս առ ի գիտել
Եւ լուսապէս ի կիր ածել :

---

## ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

Որպէս ուժգին փոթորիկ
Արմատախիլ առնէ ըզտունկս ,
Եւ ոչ բարձունք խոկ կաղնիք
Կարեն ունել նմա տոկս .

Սըմին նըման է խոնարհութիւն ,
Որ է դըժնեայ , վասն մոլութիւն .
Որ զառածեալ է այս ախտիւ ,
Ի ներէ փըրկեա անձին՝ անթիւ :

Մի՛ մոռանար ըզքոյդ անձին
Տըկարութիւն , և ներեսցիր
Որոյ տեսցես ըզթերութիւն ,
Որով և Տէր միշտ ներէ քեզ :

Թէ կարացեր դու համբերել
Առ քեզ եղեալ նախատանաց ,
Յայնժամ կարես զանձնըդ բուժել
Յախտէս՝ զոր ոչ սիրէ Աստուած :

Զի ըզծաղիկ թէ ի փոքուէ
Տընկեսցես թիւր , այլ հնար չէ
Ուղղել ըզնա ի մեծութեան .
Ահա խըրատ քեզ բարկութեան :

Չիցե՞ս տեսեալ զայր ի ցասման .
Ի բաց ելեալ է ի մըտաց ,
Խայտառակի յայտ յանդիման
Եւ հալածի յիւր մըտերմաց :

Եւ յոխորտալ՝ եթէ այլոց
Աըրտամըրտեսցես, անմիտ ես դու.
Զի թէ ընդգոն որ լեալ էիր,
Խընդալ և եթ յայն պարտ էր քեզ:

Մի՛ յանձին քում՝ լիցիս վըիժուք
Ոխակալ՝ զի մըթերեալ
Ապականէ զինձըրդ բարի.
Յար ի տանջանս ընդ քեզ մընեալ:

Դիւրապատրաստ լեր ի ներումն,
Քան թըշնամեացդ ի հատուցումն.
Զի որ վըրէժ առնուլ կամի,
Դարանակալ անձին լինի:

Արտին մեղմիկ ցորչափ դէպ գայ
Զըրպարտութիւն՝ նա կակղանայ.
Զի գիտէ նա թէ զայրացի,
Նաև մեղաց հաղորդ լիցի:

Ինձ է ողջ պատասխանի
Տացես առ անձըն զայրացեալ,
Տեսցես ըզնա շոյտ ցածուցեալ,
Որպէս ըզջուր զհրով ածեալ:

Թէ բարկութիւն քեզ եկեսցէ ,
Ե՛կ դու յանձին , փախիր հեռի .
Գիտասցես զի վընաս հասցէ
Քեզ յայն ախտէն , փախիր հեռի :

Բարկացողն է այր անպիտան ,
Զի ոչ գիտէ զբանին վախճան .
Թէպէտ զըղջայ նա յետ իւր բարս ,
Բայց զի՞նչ օգուտ . յո՞յժ անագան :

Ժուժկալութիւն է դեղ միակ ,
Հոգւոյ , մարմնոյ է միշտ ճարակ .
Թէ վարժութեամբ գործածեսցես ,
Առեալ տանիս դու յաղթանակ :



299
39

# ԾՈՅԼՈՒԹԻՒՆ

Դատարկութիւն է մեծ պատճառ
Չքաւորութեան ազգի մարդկան .
Թէ միշտ դատարկ ես դու , ծո՛յլ մարդ ,
Չունիս հանգիստ դու յաւիտեան :

Ժիր արտավար անդուլ քաղէ
Զաշխատանաց իւրոց խայրիս .
Եւ զիւր անձին պէտս գտանէ
Վայելելով յամէն բարիս :

Չէ պարտ ձեռս ի սիրտ թաղել ,
Այլ ժիր ջանիւք ի բաց քաղել ,
Զի մի՛ նման սառնամանեաց
Ի ծոց ցրտին լիցի պաղել :

Յորչափ ըղձանօք ի կիր արկցես ,
Զի անաշխատ կեանս վարեսցես ,
Անհնար է . հրաման կայ մեզ
“Քրտամբ դիմաց քոց կերիցես” :

Մի՛ ի քրտունս խընայեսցես ,
Զի որ ծոյլ է , վա՛տ է մարդն այն .
Եւ անունդ կենաց իսկ ո՛չ գըտցես ,
Ա՛հա խըրատ քեզ ծուլութեան :

---

## ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Ագահասիրտն ո՛չ ընաւ յագի ,
Թէ և բազում ինչս ունիցի .
Յաղբերս բազումս առատաբուղխ
Գըտանի նա , բայց պապակի :

Զըրկի յաւէտ որ էն ագահ
Ի բարձրելոյն յորդ պարգևաց .
Զի զդրամոյ գոլով իւր ա՛հ ,
Նա՛ մոռանայ ի սպաս զԱստուած :

Այր ընչաքաղց չգիտէ երբէք
Թէ ձրիութիւնք են յԱստուծոյ .
Եւ խարխափեալ յածի ցերեկ
Զայնս կողոպտել յամէն մարդոյ :

Յոր վիճակ կաս դու ի բընի
Այն է վայել քեզ առողջին .
Արկին ունել թէ ցանկայցես ,
Նոյն իսկ վայելքն ի քէն բառնի ։

Զոր ինչ ունիս արդ ի ձեռին
Գիտեա՛ ի միտս գոհ վայելել .
Զինչ քեզ պիտոյ ունել կրկին .
Ըզքոյդ պակաս տեսանէ Տէր ։

Զի քիմք քոյին որչափ առցեն
Զճաշակ փառաց այս աշխարհիս ,
Միտս քո և կամք այնչափ խնդրեն
Ունել բազում , և տագնապիս ։

Ո՛վ մարդ , ընդէ՞ր հարըստութեան
Լինիս ըղձեա , որ անցանէ .
Լեր դու խընդրող շնորհաց Տեառն ,
Որ գայ և ոչ ևս անցանէ ։

Թէ “ խնդրեցէք, և տացի ձեզ ”
Ասէ, դու զի՞նչ զայս իմանաս.
Եթէ փառաց վառըն գիտես,
փոխեմ ըզմիտսըդ, յանցանս բառնաս։

Յորչափ Աստուած քեզ պարգևեաց
Մի՛ ցանկանար ունել զկրկին.
Յայնժամ և Տէր քեզ զայրացեալ,
Լինիս աղքատ քան զառաջին։

Թէ ձոխ լինել կամիս դու շատ,
Մատո՛ յընչիցդ առ արս աղքատ.
Որով լընուս բարեօք բազմօք,
Եւ ձոխութիւնք գան ի քոյդ գոգ։

---

## ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Ի կերակրոց ձոխ սեղանի
Որկրամոլըն աչք ոչ յագի.
Նա՛ ուտելով խառն և բռնի
Գըլէ զորկորն ի վըտանգի։

Յորչափ մարթ է մարդոյ տանել ,
Այնչափ պարտ նմա ուտել .
Յաւելազանց ճաշակմանէ
Բառնի ախորժ ի մարդկանէ ։

Ամէն իրաց միջինն է լաւ ,
Աշխարհ այսպէս խոստովանի .
Թէ ըղձափոյն դու անցուցեր ,
Չէ ես այն գործ քեզ շահաբեր ։

Աղէք մարդոյ եւ անհանգիստ
Տանջեալ լինին որ ուտէ միշտ ,
Եւ խռովեալ զսիրտ տանջէ ,
Մինչ յանկողին խոկ արկանէ ։

Եւ չէ հնար դիւրաւ բուժել
Յայսմ ցաւէս , զի բռնութեամբ
Խանգարէ մարդ զառողջ մարմին ,
Եւ միշտ գործէ հիւանդագին ։

Թէ նորատունկ ըզծաղիկ
Ոռոգեսցես ծանր և հեղեղ՝
Բեղմնաւորի, բայց թէ արագ
Տացես ըզջուր, իսկոյն խամրի :

Եւ թէ տըհաս փոքրը մանկիկ
Խնդրէ ի մօրէն միրգ ինչ քաղցրիկ,
Ստէպ ստէպ եթէ տացէ,
Վնաս առնէ մարմնոյն փափկիկ :

Եւ թէ ի խնջոյս արբցեն սակաւ
Զուարճութիւն լինի խիստ լաւ.
Բայց թէ 'ի գինի յանչափ մնցեն,
Աղմուկ, վնաս մեծ ի մէջ ածեն :

Ահա տեսաք որչափ վնաս
Կան մեզ ի շատ ուտելոյ.
Այս ոչ միայն զմեզ վնասէ,
Այլ և յաչս Տեառն մեծ ինչ մեղ է :

Նաւարկայի չէք ինչ սահման .
Դու ըստ ինքեան դիր չափ , պայման ·
Թէ անկարող եղեր յաղթել ,
Խորհեանց անտի հեռի լինել :

Զինչ մոլութիւնք որ կան առ մեզ ,
Մերոց կամաց են հըպատակ ·
Ընդէ՞ր թողեալ եմք մեզ ըղսանձ .
Պատէ ընդ այս գիս մե՛ծ զարմանք :

Այդա դարման կամի՞ս առնել ,
Զքեզ ուսո՛ շիտ դարձ առնել
Ընկանել է ի բնոյթ մարդկան .
Բայց թէ կամիս , կարես կանգնել :

---

## ԲՂՁԱԽՈՀ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

Որ չարաչար ի մեղկութիւն
Զառածանի ու ի ցանկութիւն ,
Վընաս անձին բերէ սաստիկ .
Հեռի՛ յախտէս մարդոյ որդի՛ք :

Բանայ զերկիւղ Աստուածային
Եւ պատկառանս զիւր երեսին.
Սպաս հարեալ ախտիս դառին,
Գերի լինի բելիարին:

Ախտ ցանկութեան անդուլ յուզէ.
Զոգի և զմիտս լափեալ լիզէ.
Գոյն երեսացն տգեղանայ,
Գարշելի տեսողքըն ամենայն:

Մի ցանկանար քո ընկերին,
Մի վաւաշիր յայլոց ի կին.
Մեծ է այս մեղ և շնութիւն,
Որում բնաւ չի՛ք թողութիւն:

Առաքինի լեր դու ով մարդ,
Համեստին դէմք փայլին զուարթ.
Ողջախոհին տուն ոչ կոխէ
Զսեամս տան քո, և անարգէ:

Գոհար, ակունք և ադամանդ
Էն ի պատուի, և ունին յարգ.
Իսկ ընկերծեալն արտաքս հանեն,
Զի մի՛ լիցի ի նոցա կարգ։

Ո՛վ մարդ, Աստուած ետ քեզ հանճար,
Ընտրել զբարին, նոյն և ըզչար.
Աստի եթէ ցանկանայցես
Կամակարեալ՝ չի՛ք ներում քեզ։

Ժուժկալութեան կարի պէտք են
Խոյս տալ յախտէս դըժոխային.
Անձահարեմ ընկերս քոյին,
Զի մի՛ լիցիս գերի նոցին։

Հալածին չար ցոփութիւնք
Թէ զգոյշ լիցիս քո անձին.
Ի քո կամաց է լինել բարի,
Եւ կամ ամեն դեղոց չարին։

Բարին ամէն յանցուած և մեղք
Յարտօսր զղջման , և մաքրի մարդ ·
Որպէս ծաղկունք և դեղ դալար
Խնդրեն ըղձող լինել զուարթ ։

Առաքինի այր միշտ գովլի ·
Հոգի նորա շնորհօք է լի ·
Իսկ մոլեկանն կոր ի գլուխ
Տանջի յաւէտ պատժոց ի յուխ ։

---

## ՀՐԱՀԱՆԳ
## ՆԱՐԱԿԱՐԺ ՄԱՆԿԱՆՑ

Զուարթագեղ մանկանց հասակ ,
Գուն գործեցէք առնուլ պըսակ ·
Առնել սիրոյ և զերկիւղի
Եւ զխտութեան ըղձաշակ ։

Մի՛ ի պատրանս այս աշխարհի
Իբրև տըղայ երկեմնի
Խաբիցէք , այլ գուն գործեցէք
Իմաստութեան գնալ յուղի ։

Զերկիւղ Տեառըն ի սիրտ դիցես
Եւ մի՛ զբանիւք անցանիցես .
Միշտ պերճացեալ իմաստութեամբ
Ընամ բանից Տեառն՝ հլութեամբ :

Արեցէք զձեր միտս ի գիտութիւն,
Նովաւ գտջիք երջանկութիւն .
Եւ լինիջիք մարդկան ազգի
Արժան անդամ և պիտանի :

Մանուկ , որ ոչ իմաստութեան
Լինի զհետ , է ընդունայն
Եւ իբրև կոյր զուրկ ի տեսոյ
Յայս խարխափի կենցաղ ունայն :

Եւ զի՛նչ զուամանց խօսիմ երկայն .
Մինչդեռ հանուրց կայ յանդիման՝
Գիտնոց ու ապուշ արանց վիճակ ,
Որք են միմեանց յոյժ հակառակ :

Բայց ոչ ասեմ թէ գիտութեան
Միայն զբաղել պարտ է մարդկան .
Նաև զարտաքս առաքինի
Պարտին գործել ըստ օրինի :

Երբ պարզամիտք դիւրաւ խաբին
Ի հաղբս չարեաց ցոփ ընկերաց .
Զչար ու զբարի ոչ գիտելով
Մտանեն զանձինս ի վտանգս յոլով :

Իսկ իմաստունն ոչ իբր ապուշ
Պատրի 'դրդմանց սատանայի .
Զի սուր գոլով ուշն և ուրուշ ,
Չաղբից նորին յաղթել հնարի :

Մանուկ , որ չէ ուսումնական ,
Չունի ինչ յարգ յաչըս մարդկան
Խաւար գոլով իւր միտք և բան ,
Չարիս գործէ յայտ յանդիման :

Անկապուտ են գիտութեան գանձք .
Ապականել զայն չկարեն
Ոչ ցեց երբէք և ոչ ուտիճ
Եւ չէ մարթ անդր գողոց մըտից :

Եթէ կամիս լինել գիտուն
Եւ Բարձրելոյն խորոց ներհուն ,
Զոգիդ մաքրեա բարուք անբիծ ;
Սանձ արկ կըրից ապականիչ :

Զի ամենայն բարիք հոգւոյ
Զեղծմամբ կրից տըգեղանան ,
Որպէս ծաղկունք և բոյսք դալար
Ի խորշակէ կան թառամեալ :

Որ ըղձիւդ բարեաց հոգւոյ ծըծէ ,
Եւ զերկիւղ Տեառն ի սիրտ տայ ,
Եւ յերկրաւոր վիճակ կենաց
Կայ այնպիսւոյն փառք մշտազուարճ :

Եւ վերջապէս զայս ձեզ ասեմ.
Մանկո՛ւնք, բարի լերուք ու խոհեմ.
Առաքինի և բարեգործ,
Եւ լի՛ շնորհօք լիջիք առողջ:

Հրամանաց Տեառն լաւ անսացէք,
Նաև յուսմունս գուն գործեցէք.
Ճաշակ նորա քաղցր է յաւէտ,
Զոր ճաշակողն քաջ լիցի դէտ:

Բայց թէ անգէտ լինիջիք դուք,
Ոչ Տէր, ոչ մարդ սիրեսցէ զձեզ,
Զի անհանճար գոլով ձեր բանք,
Ոչ որ ունկն իսկ դնել կամի:

Մինչ ժամանակս ի ձեռս ունիք,
Ի պէտս ուսման պարապեսջիք.
Բայց թէ աւուրքդ անցցեն ի զուր,
Վա՜յ ձեզ, լացջիք յայնժամ անդուլ:

Նըման էք դուք նորոյ ծառոյ ,
Որ ի փոքու միայն ուղղի .
Եթէ պըղերդ ի մանկութեան
Լիջիք , անձանց ձերոց մեծ զեան :

Տեսէք , Փրկիչն որչափ սիրեաց ,
Իւր շնորհօք զձեզ պսակեաց .
Ծանիրուք քաջ զոր ինչ ասաց ·
“ Արքայութիւն է այսպիսեաց :

---

ԼԱ·

## ՕՐԻՈՐԴԱ

## ՀՐԱՀԱՆԳ ԻԱՐԵԱՑ

Օրիորդք , ձեզ խրատ մի տաց .
Որպէս փափուկ և անարատ
Պահել ջանայք զձեր մարմին ,
Սուրբ պահեցէք և զձեր հոգին :

Զարդարանք ձեզ չածեն օգուտ.
Աստուածային բանից հըմուտ
Լերուք, յորոց կարէք քաղել
Շնորհս և փառս առատաբուղխ:

Նորաձևութեամբ, զոր դեղ կարծէք,
Զգեղեցկատիպըն կործանէք.
Եւ զբնութեան տուրսն իսկ գողցես
Աղաւաղէք ի սպառ ի ձէնջ:

Թէ գեղեցիկ ի տես մարդկան
Գըտնիք ի զարդըս պատուական,
Զինչ ձեզ օգուտ ի յայնպիսեաց.
Ջանացէք գոլ ըղձեռ բարեաց:

Զի 'մարդկանէ ձեզ չիք ինչ շահ.
Բայց յԱստուծոյ ամէն ինչ գայ.
Յորոյ ակնարկ բնութիւն համայն
Զարդարեցաւ գեղ յաննըման:

Վասն որոյ ձեզ ասեմ զտէրք ,
Զ Աստուած միայն դուք սիրեցէք .
Յորմէ բարիք բղխեն առատ
Իբր յաղբերէ ամենառատ :

Ա՛հ արասցես մարմնոյդ պէսպէս
Բազմազանց զարդեր ի տես .
Եւ ըղձողւոյդ քո պիտանիս
Անհոգաբար անտեսեսցես :

Յորժամ ըզքեզ զարդարեսցես ,
Վայելչութեան լաւ միտ դիցես .
Զի մի՛ անշնորհ երեւեսջիս ,
Եւ մի՛ տեսողք անգոսնեսցեն :

Այնօրինակ զբարիս պէսպէս ,
Զ որս Տէր Բարձրեալ պարգեւեացքեզ ,
Համեստաբար թէ վարեսցես ,
Արդկան հաճոյ երեւեսջիս :

Կուսանք համայն քաջ անսացէք.
Բարւոք խրատուց մի՛ անսատէք.
Առաքինեաց ըզհետ լերուք,
Յորոց յորդեն ձեզ փառք եւ շուք:

Պարգեւք համայն աստուածային
Յանհատ գանձուց ձեզ պարգեւին.
Ուստի եւ դուք պատրաստ լերուք,
Հաճոյ լինել սուրբ Արարչին:

---

## ՈՒՂՂԵԼ ՁԳՆԱՑՍ ՄԵՐ
## Ի ԳԱԳԱԹՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Հեզիկ սիրով սիրեա՛ զԱստուած.
Պարգեւք բազումք կան քո յառաջ.
Եթէ չարիս միշտ գործեսցես,
Հատուցումն մեծ պատրաստ կայ քեզ:

Թէ ի սրտէ զԱստուած սիրես.
Պարտիս զնորայսըն կատարել.
Զոր ինչ բարւոք է՝ գործեսցես
Եւ ի չարեաց յետս խուսեսցես:

Ե՛ւ Գողգոթա լերին հանդէպ ·
Զչարչարանս Յիսուսի տես ·
Զանհաւատչեայն քո փրկութեան
Յայտ յանդիման անդ տեսանես :

Առաքինի ասեմ, լերո՛ւք ,
Յայնժամ փայլին ձեր փառք և շուք ·
Եւ ի պատճառս ձեր բարութեանց
Աղօթս ուղղեն տնանկք առ Աստուած :

Զիրեարս անկեղծ և սուրբ սիրով
Սիրեցէք միշտ եղբա՛րք , որով
Ըզհրաման Տեառն կատարէք ,
Թէ ճշմարիտ աշակերտ էք :

Չի՛ք ինչ չի՛ք մեծ քան զսուրբ սէր ,
Բարիք համայն զմանէ
Ի սպառ կախեալ կան , լո՛ւր ո՛վ մարդ ,
Չէ նա՛ բարի , որ զայս խոտէ :

Սիրել նաև պարտիմք և զազգ ·
Եւ զՀայրենիս ի սէր անքակ ·
Զոգի , զմարմին և զամենայն
Զոհել պարտիմք ի սէր նորայն ։

Ազգասիրաց ընծային փառք ·
Օրհնին նոքա դարուց ի դարս ·
Իսկ որ զընդդէմսըն գործիցեն ,
զՍատան՝ իւրեանց տիպար առցեն ։

Հուսկ պարտք մարդոյ են անզլացք ·
Սիրել զԱստուած , սիրել և զազգ ·
Զոր թէ ճշգիւ ոք առնիցէ ,
Օրհնեալ է նա , և մե՛ծ ոք է ։



6340
2013
Г-41